

**Մեղուները  
գտնվում են  
անհետացման  
եզրին**



Գիտնականները, մեղվաբույծներն ու այգեգործներն ահազանգում են. մեղուները վերջին տասնամյակում անհետանում են սարսափելի արագությամբ: 1990թ.-ից ի վեր այս միջատների տեսակների բազմազանությունն աշխարհում նվազել է 25% - ով:

## Ի՞նչ կպատահի, եթե մեղուներն անհետանան

Փոշոտող միջատների ոչնչացման հետևանքները չեն սահմանափակվի մեղվաբուծական արտադրանքների անհետացմամբ: Մեղուների վերացմամբ կանհետանան բազմաթիվ բուսատեսակներ և դրանցով սնվող կենդանիներ ու թռչուններ: Կիսախտվի կենսաբանական հավասարակշռությունը:

Գիտնականների կարծիքով, մեղուների մահացության բարձր մակարդակը 2035թ.-ին կհանգեցնի դրանց վերացման, որի հետևանքով մարդկությունը կկանգնի սովամահության վտանգի առջև:

## Մեղուների ոչնչացման պատճառները



Մեղուների պաշտպանության համաշխարհային ֆոնդը մեղուների ոչնչացման գլխավոր պատճառը համարում է միջատասպան թունաքիմիկատների ինտենսիվ կիրառումը: Մեր երկրում մեղուների ոչնչացման պատճառներից է օդի միջին ջերմաստիճանի բարձրացումը, որը նպաստում է մեղուների մակաբույծների և հիվանդությունների հարուցիչների զարգացմանը, որոնց դեմ պայքարելու համար մեղուները չունեն դիմադրողականություն (իմունիտետ):

## Մեղուների ոչնչացման պատճառներից են նաև՝

- անտառահատումները,
- կենսաբազմազանության կորուստը,
- անտառային հրդեհները,
- քաղաքաշինությունը,
- Էլեկտրամագնիսական ճառագայթումը:

# Թունաքիմիկատներ

Գյուղատնտեսությունում և անտառտնտեսությունում բույսերի վնասատուների դեմ թունաքիմիկատների օգտագործումը հաճախ մահացու վնաս է պատճառում օգտակար մեղուներին և իշամեղուներին: Մեղուների թունավորումը և ոչնչացումը սովորաբար համընկնում է թունաքիմիկատներով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման հետ:

Պարզվել է, որ 95% դեպքերում փոշոտող միջատների քիմիական թունավորումը պայմանավորված է միջատասպանների, 4% դեպքերում՝ մոլախոտասպան կյուլթերի օգտագործմամբ: Թունաքիմիկատները մեղուների օրգանիզմ թափանցում են սննդի կամ ջրի հետ անմիջական շփման միջոցով:

Թունաքիմիկատները ոչ միայն սպանում են մեղուներին, այլև բացասաբար են ազդում դրանց առողջության և սերունդ տալու ունակության վրա:

Թունաքիմիկատների որոշ քանակներ, որոնք մեղուները փեթակ են բերում նեկտարի և ծաղկափոշու հետ, ոչ միայն աղտոտում են մեղվաբուծական արտադրանքները, այլև վտանգում փեթակում գտնվող մեղուների կյանքը: Դրանց մեծ մասը սատկում է: Կենդանի մնացածները սատկած մեղուներին փեթակից դուրս են նետում:

Թունավորված, բայց դեռևս կենդանի մեղուները, դուրս գալով փեթակներից, փորձում են թռչել, ընկնում են գետնին, սողում են փեթակի մուտքի դիմաց, այնուհետև դրանց մոտ առաջանում են վերջույթների ջղաձգություններ և, ի վերջո, մահ կաթվածից: Ցածր աստիճանի թունավորման դեպքում մեղուները կարող են մի քանի օր ապրել, սակայն սնուցման և մարսողության խանգարման պատճառով դրանք, այնուամենայնիվ, չեն գոյատևում: Զիմիական թունավորման դեպքում մայր մեղուները դադարում են ձվադրել և հաճախ նույնպես մահանում են:



Թունացիմիկատների կիրառման հետևանքով մեղուներն անցել են գիշերային ռեժիմի, ցերեկները դուրս չեն գալիս փեթակից և, հետևաբար, ավելի քիչ նեկտար են հավաքում, ինչը չի համապատասխանում մեղուների կենսաբանական ռիթմերին կամ «կենսաբանական ժամացույցին»:

Երբեմն լինում է նաև մեղուների «անադոմկ» թունավորում: Եթե թունավորման օջախները գտնվում են մեղվանոցից հեռու, ապա մեղվանոցի տարածքում հազվադեպ կարելի է հանդիպել սատկած մեղուների: Նման դեպքերում մեղուները սատկում են մինչև փեթակ հասնելը, իսկ ընտանիքում մնում են միայն կերակրողները: Մեղուների ընտանիքները թեև պահպանվում են, այնուամենայնիվ, զգալիորեն թուլանում են:

Վերջերս պարզվել է, որ մեղուների համար չափազանց վտանգավոր են միջատասպան նյութերի նեոնիկոտինոիդների դասին պատկանող թունացիմիկատները: Դրանով պայմանավորված, 2018թ.-ից Եվրամիությունը նեոնիկոտինոիդների կիրառման վրա սահմանել է ժամանակավոր դադարեցում (մորատորիում):



# Ինչպե՞ս փրկել մեղուներին ոչնչացումից


Մեղուների ոչնչացումը կանխելու համար միջատաբաններն առաջարկում են սահմանափակել թունաքիմիկատների օգտագործումը գյուղատնտեսությունում, աճեցնել մեղուների սնվելու համար հարմար գյուղատնտեսական մշակաբույսեր (մասնավորապես՝ երեքնուկ և առվույտ):

Անհրաժեշտ է ստեղծել մեղվապահների համար մոտակա գյուղատնտեսական հողատարածքներում թունաքիմիկատներով մշակումների ժամանակահատվածների մասին վաղ նախազգուշացման համակարգեր: Մեղվաբույծները պետք է 4-5-օրյա ժամկետում զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ տեղեկացվեն թունաքիմիկատների օգտագործման մասին՝ նշելով դրանց վտանգավորության դասը, մշակման ժամանակացույցը և գոտիները:

Պետք է որոշվեն օպտիմալ ժամանակահատվածները, որոնց ընթացքում անհրաժեշտ է մեղվանոցները հեռացնել թունաքիմիկատներով մշակման աշխատանքների կատարման վայրերից կամ մեղուները մեկուսացնել փեթակներում:

Մեղուների և մեղվաբուծական մթերքների կորուստը կանխելու լավագույն միջոցը մեղվանոցները թունաքիմիկատներով մշակման վայրից 5-6 կմ հեռավորության վրա տեղակայելն է:

Մեղուների հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով հարկավոր է արգելել մեղուների բուժման նպատակով հակաբիոտիկների օգտագործումը և արտերկրից միջատների ներմուծումը: Նաև առաջարկվում է իրականացնել մեղվաընտանիքների մշտադիտարկում, պոպուլյացիաների վերականգնման միջոցառումներ և մեղուների բուժման մեթոդների նկատմամբ վերահսկողություն:





## Հնարավորինս խուսափե՛ք թունաքիմիկատների օգտագործումից:

Գոյություն ունեն թունաքիմիկատների բնական այլընտրանքներ: Դրանցից են, օրինակ, ցիտրուսի կեղևից ստացվող կամ էվկալիպտի յուղերը, դիատոմիտային հողը, քացախից կամ սխտորից պատրաստված ցողացիրները (սփրեյներ) և այլն: Կան նաև վնասատուների դեմ պայքարի ֆիզիկական մեթոդներ, օրինակ՝ բույսերը վնասատու միջատներից պաշտպանելու համար հողի մակերեսին ցանքածածկի փռումը (մուլչապատում):



## Տնկե՛ք ծառեր, թփեր և ծաղիկներ:

Նույնիսկ եթե ապրում եք քաղաքում, կարող եք ստեղծել կամ նպաստել բարենպաստ միջավայրի ստեղծմանը ոչ միայն փոշոտողների, այլ նաև այլ միջատների, օրինակ՝ բզեզների համար: Ձեր տան մոտակայքում (նույնիսկ բազմաբնակարան շենքի շրջակայքում) կարող եք ստեղծել փոքրիկ ծաղկաթմբեր, տնկել ծառեր, պատշգամբում կամ պատուհանագոգին ստեղծել ծաղկային «օազիս», աջակցել համայնքային այգում ծառատնկի կազմակերպմանը:

Կարող եք կախովի ծաղկազամբյուղներ տեղադրել մուտքի դռան կողքերին կամ ծաղիկներով ծաղկամաններ՝ տանիքին:

Մեղուները սնունդ են հավաքում մարտից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, ուստի հաշվի առե՛ք տարվա տարբեր ժամանակներում տարբեր տեսակի ծաղիկներ տնկելու հնարավորությունը:



## Մեղուներին ապահովե՛ք ջրով:

Ինչպես ցանկացած կենդանի արարածի, այնպես էլ մեղուների գոյատևման համար ջուրն անհրաժեշտություն է: Մեղուները ջուրն օգտագործում են իրենց ընտանիքների համար սնունդ արտադրելու համար՝ այն խառնելով ծաղկափոշու և նեկտարի հետ: Ջուրն անհրաժեշտ է նաև փեթակներում կայուն ջերմաստիճան ապահովելու համար:

Մեղուները փնտրում են մաքուր ջրի աղբյուրներ: Դրսում տեղադրե՛ք մաքուր ջրով լցված լայն, խորը թասեր ու տարաներ և պարբերաբար թարմացրե՛ք ջուրը:

Տարաներում տեղադրե՛ք քարեր, խցաններ կամ ճյուղեր, որպեսզի մեղուները կարողանան անվտանգ վայրեք կատարել, չընկնել կամ չխեղդվել:



## Ստեղծե՛ք «մեղուների հյուրանոց»:

Մեղուների շատ տեսակներ հողում փոսեր են փորում, մյուսները սիրում են բնադրել բնափայտերում կամ բույսերի ցողուններում: Գտե՛ք անձրևից պաշտպանված արևոտ տեղ՝ «մեղուների հյուրանոցը» տեղադրելու համար և համոզվե՛ք, որ այն գետնից բարձր է առնվազն մեկ մետր: Այցելու մեղուները սնամեջ եղեգների և բամբուկի ներսում բջիջներ կկառուցեն և կծվադրեն՝ թրթուրներին կերակրելով ծաղկափոշով և նեկտարով՝ մինչ հաջորդ սեզոնին ձվերից դուրս գալը:



## Աջակցե՛ք տեղական մեղվաբույծներին:

Մեղվաբուծական մթերքները գնե՛ք տեղական մեղվաբույծներից և նպաստե՛ք նրանց արտադրության զարգացմանը, մեղուների պոպուլյացիաների ավելացմանն ու պահպանմանը: Գնե՛ք օրգանական մեղր, որը ոչ մի վնասակար նյութ չի պարունակում: Գնե՛ք տեղական սեզոնային մրգեր, բանջարեղեն և հատապտուղներ, որպեսզի խթանեք գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցումը:



## Բնության գրկում գտնվելիս՝ հետևե՛ք ընդունված վարքականոններին:

Վայրի ծաղիկները մի՛ հավաքեք մեծ քանակությամբ կամ արմատախիլ անելով, մի՛ կոտրեք ծառերն ու թփերը, պայքարե՛ք խոտի այրման դեմ, որպեսզի չվնասեք հողում բնակվող միջատներին, պատշաճ կերպով մարե՛ք կրակը, մի՛ աղտոտեք և մի՛ ոչնչացրեք անտառի բնակիչների բնակատեղիները: Հիշե՛ք, որ Դուք այնտեղ հյուրի կարգավիճակում եք:



## Այնպես և զարնանը մի՛ հեռացրեք տերևային թաղիքը:

Այն պաշտպանում է ծառերի արմատային համակարգն անբարենպաստ եղանակային պայմաններից, պահպանում է խոնավությունը, հարստացնում է հողն օրգանական նյութերով և պաշտպանում այն հյուծումից և չորացումից: Հիշե՛ք, որ այդտեղ շատ միջատներ, թռչուններ, փոքր կենդանիներ, անձրևաորդեր և միկրոօրգանիզմներ են ապրում:



2018թ.-ից սկսած մայիսի 20-ը նշվում է որպես Մեղվի համաշխարհային օր:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի գյուղաբնակ ձեռներեց կանայք՝ հանուն բարձր վտանգավորության թունաքիմիկատների այլընտրանքների» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ  
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24 բ  
Հեռ.՝ (+374 10) 52 36 04  
Էլ. փոստ՝ office@awhhe.am  
Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>